08.06.05թ. h. 1237-Ն որոշ փոփ.
20.12.09թ. h. 2402-Ն լրաց.

238

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

0015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 13

2490-Ա

«22» դեկտեմբերի 2003 թ.

ՄԻՆՉԵՎ 20,0ՔՄ ՄԱԿԵՐԵՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ) ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 08.05.2003թ. հ.714-Ն որոշմամբ հաստատված «Պետության և համայնքների սեփականությունը հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 44-րդ կետի «ժ» ենթակետով, 2001թ. սեպտեմբերի 24-ի «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» հ.896 որոշմամբ և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2003թ ապրիլի 7-ի «Երևանի քաղաքապետի 14.12.2001թ. հ.1567 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հ.695-Ա որոշումը.

1.Առևտրի և (կամ) սպասարկման կրպակներ (տաղավարներ) տեղադրելու նպատակով սույն որոշման հավելվածում ընդգրկված քաղաքացիներին և (կամ) իրավաբանական անձանց (հետագայում վարձակալ)՝ վարձակալության իրավունքով տրամադրել հավելվածում ամրագրված համապատասխան մակերեսով հողամասեր:

2.Սահմանել, որ տրամադրվող հողամասերի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:

3.Լիազորել Կենտրոն թաղային համայնքի ղեկավարին (Գ.Բեգլարյան)՝ Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողների հետ կնքել հողամասերի վարձակալության պայմանագրեր, որոնք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն ենթակա են նոտարական վավերացման, իսկ պայմանագրերից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային մարմնում:

4.Ընդունել ի գիտություն, որ.

4.1.Կենտրոնի թաղապետարանի հետ, գլխավոր հատակագծի թողարկման օրվանից, 60-օրյա ժամկետում վարձակալության պայմանագիր չկնքելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.2.Կրպակների (տաղավարների) նախագծային փաստաթղթերի մշակման և համաձայնեցման համար սահմանված է վեց ամիս ժամկետ:

4.3.Կրպակների (տաղավարների) նախագծային փաստաթղթերը մշակվում են սույն որոշման հավելվածով ամրագրված շինությունների տարածական չափերի, հողամասի վրա դրանց տեղադրման պայմանների, ճարտարապետական լուծումներին ներկայացվող պահանջների հիման վրա:

4.4.Նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են Կենտրոնի թաղապետարանի հետ:

5. Պարտավորեցնել վարձակալներին.

5.1.Տրամադրված հողամասերն օգտագործել միայն սույն որոշմամբ սահմանված նպատակներով և պայմաններով:

5.2.Ապահովել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից տրված բնապահպանական պահանջների և սահմանափակումների կատարումը:

5.3.Կրպակների (տաղավարների) շահագործումն սկսել միայն Կենտրոն թաղային համայնքի հիգիենիկ հակահամաճարակային հսկողության կենտրոնի և հրշեջ ծառայության թույլտվություններից հետո:

6.Հանձնարարել Կենտրոն թաղային համայնքի ղեկավարին (Գ.Բեգլարյան)՝ վարձակալի հետ կնքել քաղաքացիաիրավական պայմանագիր՝ նախագծով նախատեսված կրպակի (տաղավարի) տեղադրման ավարտի ժամկետը վարձակալի մեղքով խախտվելու դեպքում գույքային պատասխանատվություն սահմանելու մասին:

7.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը (Ս.Դանիելյան)՝ ապահովել սույն որոշման կատարման ընթացքում ՀՀ իրավական ակտերով նախատեսված քաղաքաշինական փաստաթղթերի ընդունումը և համապատասխան ձևակերպումների կատարումը:

8.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությանը (Հ.Մուրադյան)՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի և ՀՀ կառավարության 12.10.1998թ. հ.624 որոշման համաձայն վարձակալի՝ սույն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության նկատմամբ իրականացնել պետական վերահսկողություն:

9.Նախազգուշացնել վարձակալին, որ սույն որոշման ընդունումից հետո, մեկ տարվա ընթացքում կրպակը (տաղավարը) չտեղադրելու, ինչպես նաև որոշմամբ ներկայացված պահանջները չկատարելու դեպքում որոշումը կհամարվի առոչինչ:

10. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Կենտրոնի թաղապետարանի (Գ.Բեգլարյան) վրա:

11.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ - Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն.Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ե.ԶԱԽԱՐՅԱՆ

ՍՇ

Հավելված
Երևանի քաղաքապետի 2003թ.
22.12. -ի հ. 2490-Ա
որոշման

Ց Ա Ն Կ

Առևտրի և սպասարկման կրպակների (տաղավարների) տեղադրման նպատակով տրամադրվող հողամասերի

Հ/հ	Քաղաքացու կամ իրավաբանական անձի անվանումը	Տրամադրվող հողամասի հասցեն և մակերեսը	Կրպակի (տաղավարի) առավելագույն չափերը	Օգտագործման նպատակը	Հողամասի վարձակալության ժամկետը (տարի)	Հողամասի վրա կրպակի (տաղավարի) տեղադրման պայմանները	Ճարտարապետական լուծումներին ներկայացվող պահանջները	Վարձակալին ներկայացվող այլ պահանջներ
1.	Հայկազ Ադամյան	Հանրապետության փողոցի հ.24 շենքի դիմացի մայթին 5,0քմ	Կրպակի չափերն ըստ գլխավոր հատակագծի, բարձր. մինչև 3.5մ	Սպասարկում	5	Տեղադրումը բետոնե հարթակի վրա, առանց հիմքերի	Ճակատները նախագծի համաձայն	Հարակից տարածքը բարեկարգել
2.	Հրաչյա Աճեմյան	Տիգրան Մեծի պողոտայի և Քրիստափորի փողոցի հատման մաս 20քմ	Տաղավարի չափերն ըստ գլխավոր հատակագծի, բարձր. մինչև 3.5մ	Առևտուր և սպասարկում	5	Տեղադրումը բետոնե հարթակի վրա, առանց հիմքերի	Ճակատները լայն, ապակեպատ բացվածքներով	Հարակից տարածքը բարեկարգել
3.	Սուսաննա Ալեքսանյան	Մաշտոցի պողոտայի հ.20 շենքին հարող տարածք 20,0քմ	Կրպակի չափերն ըստ գլխավոր հատակագծի, բարձր. մինչև 3.5մ	Առևտուր և սպասարկում	5	Տեղադրումը բետոնե հարթակի վրա, առանց հիմքերի	Ճակատները լայն, ապակեպատ բացվածքներով	Հարակից տարածքը բարեկարգել
4.	Լ.Ղայֆաջյան	Խանջյան փողոցի հ.33 շենքին հարող տարածք 14,0քմ	Կրպակի չափերն ըստ գլխավոր հատակագծի, բարձր. մինչև 3.5մ	Առևտուր և սպասարկում	5	Տեղադրումը բետոնե հարթակի վրա, առանց հիմքերի	Ճակատները լայն, ապակեպատ բացվածքներով	Հարակից հողաշերտային մասը կանաչապատել և բարեկարգել

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Կոշեցյան

2490